№ 11 Յունվարի 23 (Փետրվարի 4) 1881 Յունվարի 23 (Փետրվարի 4) № 11

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Գաւառաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"
ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
1881 թուին
(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տերութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 բ., հինգ ամս. 5 բ., չորս ամս. 4 բ., երեք ամս. 3. բ. երկու ամս. 2 բ. և մի ամս. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Խղճի ազատութիւն։ Նամակ Երեւանից։ Նամակ Ղզլարից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քաղաքական տեսութիւն։ Նամակ Ֆրանսիայից։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

—

„Голосъ" լրագիրը իր ներկայ տարվայ համարներից մէկի մէջ յիշեցնելով, որ եկող փետրվարի 3-ին գերմանական բազմաթիւ քաղաքները կը տօնեն Լեսսինգի մահուան հարիւրամեայ յօբելեանը, նկատում է, որ կատարվելու փառաւոր և շքեղ հանդէսները և արտասանելի ճոխ ճառերը բոլորովին կեղծ կը լինեն, օրովհետև հակահրէական շարժումը Գերմանիայի մէջ ապացուցեց, որ երեւելի Լեսսինգի դաղափառները դեռ ևս չեն տարածվել գերմանական ժողովուրդի մէջ։ Գերմանացիներից շատերը ապացուցին, որ նրանք աւելի ընդունակ են քարոզիչ Շտէօկերի ճառերից դրդռվել, քան թէ ըմբռնել Լեսսինգի պրոգրամատ գաղափարները։

„Գերմանիայի մէջ սկսված հակահրէական շարժումը, ասում է լրագիրը, Ռուսաստանի մէջ էլ արձագանք գտաւ։ Մեր անկիրթները օգուտ քաղեցին այդ սխուր երեւոյթից և սկսեցին ծաղրել խղճի ազատութիւնը այն շարժառիթներից դրդված, որ խղճի ազատութեան գաղափարի իրագործելուց կարող են օգուտ քաղել նոյնպէս և հրէաները։ Փոխանակ հին վերքերը դարմանելու, նրանք նոր վէրքեր են հասցնում։ Փոխանակ քրիստոնեաներին հրէաների հետ հաշտեցնելու, նրանք աշխատում են կրօնական թշնամութիւն ծաղեցնել, որի կորստաբեր հետեւանքները մինչև անգամ որոշել չէ կարելի։"

Հիմնվելով պատմական իրողութիւնների և օրինակների վրա, առաջ բերելով մի քանի նշանաւոր պատմական անձինքների վկայութիւնները խղճի ազատութեան բարերար հետեւանքների մասին, լրագիրը այն եզրակացութեան է հասնում, որ Ռուսաստանի համար անհրաժեշտ է խղճի ազատութիւնը և դաւանութիւնների կատարեալ հաւասարութիւնը։ Այդ երկու օրէնքները, նկատում է վերջը լրագիրը, անհրաժեշտ են Ռուսաստանի պետական կեանքի զարգացման համար։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունվարի 14

Առողջապահական կամ քաղաքիս մաքրութեան համար կազմած յանձնաժողովը սկսեց իր գործը սոյն ամսի 12-ից. յուսով ենք, որ պ. ըժ. Լ. Տիգրանեանցի նախագահութեան ներքոյ, ժողովը մեծ գործ կը կատարէ մաքրութեան նկատմամբ, որին այդչափ կարօտ է մեր անմաքուր քաղաքը։—

Հայոց թեմ. դպրանոցի յարգելի հոգաբարձութիւնը սկսեց արդէն ուշադիր լինել դպրանոցի նիւթական մասի աճեցնելուն, արդէն սկսել է դիմել 1872 թուի ստորագրվողներին, որք սիրով են վճարում իրանց խոստացած նուէրը։—Լսում ենք, որ Ալէքսանդրապոլի յաջորդ հ. Գ. Սուրէնեանը ցանկացել է գալ Երեւան Գ. Եղիազար արքեպիսկոպոսի փոխարէն. ափսոս միայն, որ ալէքսանդրապոլցիք կը զրկվեն նորին գերապատուութիւնից։—

Մի գեղեցիկ օր պ. Պապաջանեանը մի հեռագիր ձեռին ցոյց էր տալիս սորան նորան, ի թիւս որոց և Ս. Ղալումեանցին և Վ.արդ. Եղիազարեանցին և ասում. ահա Ս. Մանկունին հրաւիրում է ինձ լինել ուսուցչապետ փլխոփայութեան դասերի Էջմիածնայ ճեմարանում։ Մենք այդ լուրը հրատարակեցինք. նա մեզ սրտախօս անուանեց. մենք զարմացանք։ Հետաքրքիր լինելով, իմացանք, որ մենք սուտ ենք ասել, որովհետև նորա պայմանը չէ հաստատվել, վասն զի աշակերտները յայտնել են թէ «աւելի լաւ են համարում ոչինչ չը սովորել, քան թէ պ. Պապաջանեանցից փիլիսոփայութիւն սովորել»։—

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ Վ.Է Պ

(1722—1728)

—

ԺԱ.

Մինչև այժմ երկու մէլիքների շահերը համաձայն և լծորդաբար էին ընթանում։ Նրանց միաբանութիւնը՝ հայ գերիների շղթայակապ մնալու, պատանի Ստեփաննոսի սպանման և Գենուազի գաւառը իր միակ ժառանգից զրկելու վերաբերութեամբ՝ բոլորովին անկեղծ էր։ Բայց երբ այդ բոլոր մեքենայութիւնները ոչնչացան, երբ գերիները ազատութիւն ստացան և Թորոս իշխանը յաղթող հանդիսացաւ, այնուհետև երկու մէլիքների միաբանութիւնը սկսեց փոքր առ փոքր խախտվել։ Մինչև այժմ նրանք միաբան էին մէկ խորհրդի մէջ միայն, այն է Գենուազի գաւառը զրկել իր միակ ժառանգից՝ Ստեփաննոսից, բայց թէ նրանից յետոյ ում կը մնար այդ գաւառը,—վերջին հարցում երկուսի էլ շահերը տարբերվում էին։ Մէլիք Ֆրանգիւլը ցանկանում էր իր ձեռքը ձգել Գենուազը և ամբողջ Ղափանի իշխանը դառնալ, իսկ մէլիք Դաւիթը նոյն իշխանութիւնը իրան էր վերապահում։ Մէլիք Ֆրանգիւլը աշխատում էր օգուտ քաղել մէլիք Դաւիթի և նրա աղջկայ ամուսնութիւնից միայն սկզբնական գործողութիւնների համար, բայց երբ նա պարզ նկատեց, որ աղջիկը բոլորովին հակառակ է իր հօրը, այնուհետև աւելի ցած ընկաւ այդ մարդու նշանակութիւնը իր աչքում և աւելի հաստատ կերպով համոզվեցաւ իր յոյսերի մէջ, թէ կարող է նրան ասպարէզից դուրս քշել։

Մէլիք Դաւիթը իր կողմից նկատում էր, որ իր վարկը, իր նշանակութիւնը հետզհետէ ցած է ընկնում իր գործակցի աչքում, որ նա մինչև անգամ դադարել է իր հետ խորհրդակցելուց և ինչ որ գաղտնի ձեռնարկութեան պատրաստութիւններ է տեսնում։ Մէլիք Ֆրանգիւլի այդ ծածկամտութիւնը աւելի զայրացրեց նրան, «ես քո հէրը կանիծեմ... ասաց նա իր մտքում և դուրս եկաւ վրանից, անհամբերութեամբ սպասում էր իր ծառային, որին ուղարկել էր ներքինապետ Ահմէդի մօտ լուր բերելու։ Ուրացողը ներքինապետի միջնորդութեամբ կրկին փորձ փորձեց տեսնվելու իր աղջկայ հետ, յայտնելով, թէ ինքը գնալու է Տաթև և ցանկանում է նրան մնաք բարով ասել։ Ծառան վերադարձաւ, բերելով ուրախալի լուրը, թէ սիկինը բարեհաճել է ընդունել նրան։

Դիշեր էր։ Մէլիք Ֆրանգիւլը այս գիշեր նոյնպէս առանձին տեսութիւն էր խնդրել խանի հետ և գնացել էր նրա մօտ, առանց այդ մասին լրմացում տալու մէլիք Դաւիթին։ Ընկերոջ այդ վարմունքը աւելի կասկածանքի մէջ էր գցում նրան։ Այս պատճառով նա վարձել էր խանի մանկլաւիկներից մէկին, որ լրտեսէ մէլիք Խոսակցութիւնը խանի հետ և լրան տեղեկութիւն տայ։

Սիւրին ընդունեց հօրը մի առանձին վրանում, որ լուսաւորված էր լապտերի լուսով և գտնվում էր կանանոցից դուրս։ Այնտեղ կանգնած էր միայն ծերունի ներքինապետը, իսկ սիկինը նստած էր գորգի վրա, և ինքն էլ չը գիտէր՝ թէ ինչու նրան հետաքրքրում էր համբարել գորգի փոքրիկ քառակուսիները։ Տեսնելով հօրը, նա դարձաւ դէպի ներքինապետը։

—Ահմէդ, դուք կարող էք վրանի դրսում ըսպասել։

Ծերունին հեռացաւ և նստեց վրանի կողքին, խոտերի վրա։ Սիւրին դեռ գլուխը խոնարհեցրած, աչքերը չէր հեռացնում գորգից։ Հօր այցելութիւնը խանգարեց նրան և մոռացաւ գորգի եզերքի մի անգամ համբարած քառակուսիների թիւը։ Նա սկսեց կրկին համբարել։ Աղջկայ սառն ընդունելութիւնը սաստիկ վշտացրեց հօրը, բայց նա զսպելով իր վրդովմունքը, սկսեց հայրական մեղմ և գթառատ խօսքերով կշտամբել նրա սառնասրտութիւնը,—սկսեց յիշեցնել նրան, թէ ինքը հայր է, թէ հօր պատիւը, հօր յարգանքը ինքն Աստուած հրամայում է զաւակներին, թէ զաւակները իրանց պարտաւորութիւնը այլ կերպ կատարած չեն կարող լինել, բայց միայն սիրելով և հնազանդվելով իրանց ծնողներին։

—Դու գիտես, Սիւրի, վերջացրեց նա իր քարոզը.—ես ծերացել եմ, այս աշխարհում իմ միակ յոյսը, իմ միակ մխիթարութիւնը դու ես մնացել։ Աստուած ինձ ուրիշ զաւակներ չը տուեց. եղածները բոլորը մեռան։ Եթէ դու ես չը մխիթարես քո հօր ծերութիւնը, ինչ կը լինի նրա վիճակը։

Սիւրին դեռ նայում էր գորգի վրա. այժմ ըսկսել էր համբարել նրա միւս եզերքի քառակուսիները։

—Ես շրջապատված եմ թշնամիներով, շարունակեց հայրը,—իմ խորհրդակիցները, իմ մտերիմներն անդամ փոս են փորում իմ առջև։ Ամեն կողմից աշխատում են ինձ ցած գցել, ամեն կողմից պատրաստվում են խլել իմ փառքը։ Իմ ծերութիւնը խայտառակութիւնով կը վերջանայ, եթէ դու չօգնես ինձ։ Դու այն գաւազանն ես, որ պէտք է նեցուկ լինի ծերունի հօրը, որի վրա յենած, նա պէտք է շարունակէ իր ընթացքը։ Բայց դու այն աստիճան անգութ ես, Սիւրի, որ մինչև անգամ մերժում ես հօր այցելութիւնը։

Սիւրին լսեց վերջին խօսքերը միայն։ Նա անգիտակցաբար համբարում էր գորգի քառակուսիները, բայց նրա միտքը թռել, սլացել էր հեռու և հեռու, այն պատանու մօտ, որին Թորոս իշխանը այսօր իր հետ տարաւ։

—Այո, ես առաւօտեան մերժեցի քո այցելութիւնը, պատասխանեց նա, գլուխը վեր բարձրացնելով և այժմ միայն ուղիղ կերպով նայելով հօր երեսին։—Հիմայ ընդունեցի։ Ի՞նչ ասելիք ունես։

Այդ հարցը աւելի խոր խոցեց հօր սիրտը։ Կը նշանակէ նա չէր լսում իր խօսքերը, կը նշանակէ ոչինչ ազդեցութիւն չունեցան իր քարոզները։ Նրա յոյսերը բոլորովին ջարդուփշուր եղան, բայց դարձեալ չը կորցնելով իր վստահութիւնը, ասաց։

—Սիւրի, դու պէտք է միջնորդես խանի մօտ, որ Գենուազի և Բարգիւշատի մէլիքութիւնը ինձ յանձնէ։ Դու կարող ես այդ անել։

—Ես կարող եմ, բայց չեմ անի։

—Ի՞նչու։

—Ես չէի ցանկանայ, որ Գենուազի և Բարգիւշատի հայ բնակիչները այնքան տանջվէին քո ձեռքում, որ գայլն խանի դրանը և իրանց կրակ տային, այրվէին, ինչպէս այրվեցին այսօր տաթեւացիները։

—Սիւրի, ընդունիր իմ խնդիրքը, աղաչում եմ, առաջ տարաւ նա ողորմելի ձայնով։—Եթէ ծերունի հայրը ոչինչ յարգանք չունի քեզ մօտ, գոնէ յիշիր մօրդ, որ նրա կինն է եղել, որին սիրում էիր դու։

—Որին դու սպանեցիր...պատասխանեց Սիւրին և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկութեամբ։

—Ե՞ս...բացականչեց հայրը սարսափելով.—Աստուած կը պատժէ քեզ, Սիւրի, որ այսպէս չարաչար կերպով զրպարտում ես հօրդ։

—Եթէ Աստուծոյ պատիժները շուտ վրա հասնէին, դու այժմ այս աշխարհում չը պիտի լինէիր...պատասխանեց նա դողդոջուն ձայնով։—Կրկնում եմ, դու սպանեցիր իմ մօրը։ Դու ուրացար Լուսաւորչի սուրբ հաւատը Տաթեւի մէլիքութիւնը ստանալու համար և այնուհետև քո տունը լցրիր մահմեդական կնիկներով։ Խեղճ մայրս չը կամեցաւ ապրել ուրացող ամուսնի հետ, թողեց քո տունը և գնաց իր հօր տունը։ Քանի անգամ քարշ տուեցիր նրան և կամենում էիր բռնութեամբ քեզ մօտ պահել, բայց դարձեալ փախչում էր նա։ Քանի անգամ գանակոծվեցաւ նա քո անգութ ձեռքերից։ Բայց այս բոլոր տանջանքներին կը համբերէր նա, եթէ դու չը խլէիր նրա միակ աղջիկը—ինձ, և չը գցէիր մահմեդական հարեմի մէջ։ Ես երբէք չեմ մոռանայ այն սգաւոր և ցաւալի օրը, երբ խեղճ մայրս, արտասուքը աչքերում, տարածվել էր գետնի վրա, գրկել էր քո ոտները։ Միւս կողմում կանգնած էին խանի ներքինիները, իսկ մէջտեղում—ես։ Մայրս աղաչում էր, պաղատում էր քեզ, որ ինձ խանի մարդկանց ձեռքը չը տաս։ Ես լաց էի լինում։ Դու, առ ոչինչ համարելով իմ և մօրս արտասուքը, ինձ յանձնե-